

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը բուժքույրերի օրվա առթիվ

12. 05. 2023թ

Սիրելի՛ բուժքույրեր,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ:

Շնորհակալ ենք ձեր ամենօրյա ահռելի աշխատանքի, հոգատարության ու նվիրվածության համար:

Մեծ է այն պատասխանատվությունը, որը դուք ստանձնել եք՝ ընտրելով այս բարդ մասնագիտությունը, որն իր մեջ ամբողջացնում է մարդկային ամենաբարձր հատկանիշները:

Անհնար է պատկերացնել բժիշկների աշխատանքն առանց բուժքույրերի, որոնք մեծ նվիրումով են կատարում մասնագիտական իրենց պարտքը:

Ապացուցված է, որ ձեր հոգատար և ջերմ վերաբերմունքի, հուսադրող խոսքի շնորհիվ մարդիկ ավելի արագ են ապաքինվում: Հենց այս նվիրումն է փրկում կյանքեր:

Ցանկանում եմ ձեզ առողջություն ու բարօրություն, սեր և երջանկություն, ինչպես նաև մասնագիտական նորանոր հաջողություններ: